

ՄԱՅԵՆԱԳՐԱԿԱՆ

ԱՆԺԱՆՈԹ ԷՋԵՐ ՄԱՅԹՈՑԻ ԵՒ ՆՐԱ ԱՅԵՐՏՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ ԸՍՏ ՕՏԱՐ ԱՂԻՐԻՆԵՐԻ

(Շարունակութիւնն ին վերջ:)

Թէոդորի քահանայութիւնը անցել է Անտիոքում, իր ծննդավայրում: Նրա դասընկերն էր եւ մօտերիմը հռչակաւոր Յովհան Ոսկերեւանը, որ քահանայ էր միեւնոյն Անտիոքում: Խորենացու յիշած գանգաւոր յոյների կողմից, թէ ինչու հայերը Ոսկերեւանին չեն դիմել, գուցէ, եւ ղօղանջէ այն իրողութեան, որ Թէոդորի եւ Ոսկերեւանի շրջանում է, որ Մաշթոց յաջողել է հայ գրերի գիւտը եւ հետագայում, ոմանք Թէոդորին էին վերագրում, ուրիշները՝ Ոսկերեւանին այդ մեծ շնորհը:

Սրանով ընդգծւում է գրերի գիւտի համար որոշ եւ գրական տարեթիւ՝ 383—392 տարիների տասնամեայ միջոցը: Տեղը չէ կանգ առնել մեր այս ենթադրութեան վերայ եւ նրա հաւանականութեան հիմքը մեջ բերել: Հայ գրերի ծագումը մութ է եւ ոչ ոք յանկարծակի չպիտի գայ մեր ենթադրութեան հանդէպ:

Մեր անմիջական նպատակի համար բաւական է նկատել, որ Թէոդորի սկզբնական ծանօթութիւնը Մաշթոցի հետ կարող էր տեղի ունեցած լինել վերջինս տքուն որոնումների ճանապարհի վերայ:

Թէոդորը յայտնի էր իր բեղմնաւոր գրչով: Մի շարք գրուածներ, ուղղուած են եղել հերձուածների դէմ. Որոգին, Արիոս, Եւնոմ, Մակեդոն, Ապոլինար, հրեայ եւ հեթանոս ուսմունքներն բոլորն էլ առիթ են տուել նրան բանակուի ասպարէզ իջնելու:

Այս տեսակ գրութեանց կարգին է պատկանում եւ այն, որ ուղղուած է եղել Մաստուբիոս հայ քորեպիսկոպոսին: Երկու ճառը նուիրուած է եղել հաւատոյ խնդիրներին τὰ περὶ τῆς εὐσεβοῦς πίστεως: Նեստորական ոգի է շնչելիս եղել մանաւանդ վերջին ճառը, ինչպէս շեշտում է փոքր:

Նշն փոքր ծանօթ է եւ մի ուրիշ գրութեան, ուր Թէոդորը τὸ Νεστορίου δόγμα ἐστὶ καὶ πρὸ Νεστορίου ὑπῆρχεν ὑπερενγόμενος, այս-

ինքն «Նեստորի դաւանանքն էր ործկում, թէեւ նրանից առաջ էր ապրել»¹:

Եկեղեցու հայրերը իրաւունք ունէին կասկածելու, որ հայերը կարող էին վարակուած լինել Թէոդոր-Նեստորեան խմորով:

Թէոդորը լաւ ծանօթ էր Ռաբուլին: Սկզբում նիզակակից էին: Մամւեստայի եպիսկոպոսը թէեւ մեռած, մասնակից էր Եփեսոսի վէճերին: Ռաբուլը լքեց Թէոդորականների դասը 431 ի ձմեռը եւ անցաւ հակառակ բանակը: Նա էր, որ մերկացրեց Թէոդորի այսպէս ասած նեստորականութիւնը:

Բնական էր սպասել, որ Ռաբուլը պէտք է յորդորէր եւ հայերին խորշել Թէոդորից եւ նրա գրքերից: Անտարակոյս գիտէր, որ անգոսնելի այլը, որ տակաւին երէկ խոշոր դէմք էր, որոշ հոչակ եւ հեղինակութիւն ունի հայերի մօտ, Մաշթոցի հետ ունեցած գրութեան հետեւանքով եւ նրա դեռ թարմ յիշողութեամբ:

Յաջորդ անցքերը ցոյց տուին, որ իրօք դիւրին չէր վարկաբեկ անել Թէոդորին: Հայ եպիսկոպոսները փոխանակ խոնարհելու տիեզերական ժողովի որոշման առաջ, հարկաւոր են համարում հաւաքական խորհրդածութեամբ մարդու շարժել և Պրիս եւ տեղը իրազեկ լինել ճշմարտութեան:

Պրիկ իր պատասխանում քաշւում է տալ Թէոդորի անունը, նրա փափկանկատ լռութիւնը, որ շեշտում է հարցի ցաւոտ կողմը, հարկաւորները մեղմացնելու համար էր: Հայ տարաձայնութեանց եւ վէճերի վախճանը մօտէն յայտնի չէ: Գիտենք միայն, շնորհիւ նոյն Լիբերատի, որ 2 թէ 3 հայ վարդապետ կատաղե քարող սկսեցին ընդդէմ Թէոդորի: Նրանք շրջում էին ամենուրեք Թէոդորի գրքերից քաղուածներ ձեռքերին եւ պահանջում էին դատապարտութիւն: Լիբերատը նրանց անուանում է Ապոլինարի հետեւորդներ, սակայն լատին եկեղեցականի բերանում եւ Ե. ժողովից յետոյ, այդ համալոր է ջերմ կիւրեղականի: Մոլեռանդ հակաթէոդորական վարդապետները, բացայայտ է, որ այն հոսանքի ներկայացուցիչներն են, որ յաղթող է հանդիսացել Հայաստանում:

Ոչ միայն Պրիկի, այլ եւ Վասիլ սարկաւագի թուղթն ընդդէմ Թէոդորի, ուղղուած հայերին, աննշանակ չեն անցել հայ վէճերի հետեւանքի համար:

¹ Photii Bib. 38. Θεοδώρου Ἀντιοχείας ἐξομνησία τῆς κτίσεως, P. G. 103, col. 70.

Եփեսոսեան դաւանաւոր յաղթանակեց։ Այս առթիւ հայերը վերստին պատգամաւորութիւն են ուղարկում մայրաքաղաք առանձին յանձնարարականով Պրովի պատրիարքին, ինչպէս եւ գրում են Աղեքսանդրիոյ Կիւրեղ եպիսկոպոսին։ Լիւբրատի թերի հաղորդագրութիւնը այս անցքերի մասին լրացնում է մի կարեւոր յիշատակարան, որ դիպուածով պահուել է Ե. տիեզերական ժողովի արձանագրութիւնների մէջ։ Այս ժողովի հինգերորդ նիստում կարդում են Կիւրեղի եւ Թէոդորի քաղաքացիներին կից եւ մի հատուած՝ *Ex libellis porrectis a presbyteris et diaconis qui transmissi sunt ab episcopis et clericis et monachis et caeteris Magnae Armeniae et Persidis et aliis gentibus* (Mansi IX, col. 240).

Յանձնարարական նամակի հետ պատգամաւորութիւնն ունէր *impia capitula* Թէոդորի, որ ներկայացրին Պրովին, ինչպէս պատմում է նոյն յիշատակարանում. *“porrecta sunt autem et impia capitula ex Theodori codicibus sanctae memoriae Proclu ab Armeniis”*. Խօսքն այն քաղաքացիների մասին է, որը յիշում է եւ Լիւբրատը *excerpta capitula* կոչելով։

Migne արտատպելով յիշեալ վաւերագիրը Mansi IX հատորից զետեղել է Պրովի առ Հայս թղթից առաջ (P. G. 65, col. 855). ինչպէս երեւում է շիփթելով երկրորդ դեսպանութեան թուղթը առաջին դեսպանութեան թղթի հետ։ Տեսանք, որ Ղեւոնդի եւ Աբերիոն-Կորիւնի դեսպանութիւնը եւս ունէր *libellum* կրօնների դեսպանութիւնը եւս ունէր *libellum* պատրիարք Պրովին ներկայացնելու։ Այդ թուղթը մեղ չի հասել։ Ե. տիեզերական ժողովի արձանագրութիւնների մէջ պահուած յիշատակարանը պատկանում է երկրորդ դեսպանութեան։ Արդարեւ Լիւբրատի մի կոչումը, որ գտնում ենք այս յիշատակարանում, հաստատում է մեր կարծիքը, որ կարեւոր է անցքերի յաջորդականութիւնը ըմբռնելու համար։

Լիւբրատ վկայում է, որ 2—3 հայ վարդապետները շրջելով ամբողջ արեւելքը պահանջում էին, որ նեստորամիտ հայերը, նման Թէոդորի եւ միւսների, նզովուին, եւ բերում է նրանց խօսքը։

“Quia si Nestorius iuste damnatus est, damnentur et ista, dicebant, cum suis auctoribus”. Այս կոչումը նայում է *ex libellis porrectis* հատուածի հետեւեալ տողերին։

“Et sicut domino placuit condemnari manifeste et nominatim in Epheso ab uni-

versali Synodo Sacrilgium Nestorium, si per vos etiam antea condemnatum sine nomine, sacrilegiorem in varia impietate Theodorum nominatim condemnari et eos qui secundum impiisimam eius expositionem hactenus in Syria et Cilicia sapiant et docent”.

Լիւբրատը, կրկնում ենք, ի նկատի ունի այս տողերը։ Ստորագծած բառերը, որ մի պարզ ակնարկ է Պրովի հայոց գրած դաւանաբանական թղթին, ուր հերքւում է Թէոդորեան տեսութիւնները առանց անունը տալու, ինքն ըստ ինքեան բաւական են հաստատելու որ յիշեալ թուղթը ծագում է երկրորդ դեսպանութիւնից։ Կիւրեղ-Թէոդորեան վեճերը վերջացնելուց յետոյ հայերը լայն քարոզչութիւն են սկսում Եփեսոսեան դաւանաւորի օգտին. եւ Լիւբրատը չի չափազանցնում, երբ ասում է, որ հայ վարդապետները աղմկում են ամբողջ արեւելքը։ Նախ քան Պրովի գնալը հայերը դիմել էին անձամբ թէ գրով Աղեքսանդրիոյ Կիւրեղ եպիսկոպոսին, ինչպէս վկայում են իրենք։

“Sicut in nostris contra Theodorum et scripta eius libellis ad Alexandrinam episcopum Cyrillum diximus et in his quae ad vestram dicimus beatitudinem”.

Հայերը ինչպէս եւ միւս կողմնակիցները Եփեսոսի ժողովի իրենց հակաԹէոդորեան քարոզով այնքան հեռու էին գնացել, որ նոյն իսկ նրան պարագլուխը, Կիւրեղ եպիսկոպոսը ստիպուած եղաւ սաստել նրանց եւ ծայրայեղութեան առաջն առնել։ Անտիոքի Յովհաննէս պատրիարքին ուղղած նամակում բացարձակ ընդդիմանում է, որ Թէոդորը եւ կամ որեւէ ուրիշը, որ մեռած է անէծքի եւ կամ բանադրանքի առարկայ դառնայ. (*“neque autem de Theodoro, neque de alio quoquam qui iam defuncti sunt, scripsi tibi aut ut anathematizetur aut ut abdicetur”*. P. G. 65, col. 879.)

Յետ-Եփեսոսեան իրադարձութիւններին հայերի այնքան սերտ գործակցութիւնն ապացուցանում է, որ իրենց հայրենի շրջանում ինդիքը անցել է կուսակցական պայքարի բովից։ Պէտք է կարծել, որ ընդդիմադիր ոյժերն աննշան չեն եղել եւ յաղթանակ դիւրութեամբ չէ տուած։ Այլապէս դժուար թէ կարիք զգացուէր դիմել օտար եկեղեցիներին եւ միահամուռ գործունէութեամբ տապալել ընդմիջոս ոսոխին եւ ամբարշտել յաղթանակը։

Լիւբրատի ցուցումը, որ քարոզիչ վարդա-

պետները «երկու թէ երեք», duo vel tres հոգի էին՝ թեւադրում է մի միտք, արդեօք եւ այս անգամ դեպքանութիւնը բաղկացած էր նոյն «երկու թէ երեք» անձերից, որի մասին խօսում է Կորինւնը: Տեսանք Պոլիս ուղարկուեցան Ղեւոնդ եւ իւրը Կորինւնը եւ սրանց այնտեղ յարեց նաեւ Եզնիկը, որ Եդեսիայից մեկնել էր Կ. Պոլիս Յովսէփի ընկերակցութեամբ: Ուշագրաւ է, որ Ղեւոնդն ու Կորինւնը «մատուցեալ յարէին յեղինակն», պատմիչը չէ յիշում այստեղ Յովսէփին:

Թուում է, որ երկուսը պատուէր ունէին գործել Եզնիկի հետ: 2ի կարելի է համեմատել այս երկու երեք հոգուն 1ի բերատի 2 կամ 3 անձերի հետ, որ այնքան ճշտօրէն է որոշում դեպքանութեան կազմը:

Եփեսոսեան անցուդարձի վերայ կանգ առանք ոչ միայն այն պատճառով, որ մի նոր եւ թանկագին էջ է բացւում հայ եկեղեցու պատմութեան մէջ նրա դաւանաբանական աւանդի ծագման տեսակէտից, այլ եւ որ այդ անցուդարձը նոր լոյս են ցոլում Մաշթոցի եւ նրա կեանքի վերայ, 420—435 թուերին Մաշթոցի այցը Ամիդ, Եդեսիա, Սամոսատ եւ Մելիտինէ որեւէ աղերս չունէին եւ չեն կարող ունենալ գրերի գիւտի հետ: Մանկութիւնից հելլէն դպրութեան վարժ, նա պէտք չունէր նաեւ կրթութեան: Եւ ոչ թարգմանչական գործը գոնէ նրա համար առանձին ճանապարհորդութեան շարժառիթ կարող է նկատուել: Եթէ գրերի առթիւ նա այցելել է յիշեալ քաղաքները եւ մանաւանդ Եդեսիան, ժամանակակից լուսաւորութեան կենդրոնը, յայտնի իր աստուածաբանական բարձր դպրոցով, յամենայն դէպս այցը եղել է 420 թուականից շատ առաջ, 406 գրերը արդէն պատրաստ էին եւ նրանց հոգսը վերջացած: Հաւանական է, որ գրի որոնումների շրջանին նա ծանոթացել է ոչ միայն Ռաբուլին, այլ եւ աւելի հոգակաւոր Թէոդոր Մամուկեստացու հետ: Անձնական ծանոթութեան հետեւանքով է գրուած եւ Թէոդորի մեզ հետաքրքրող գործը, Մաշթոցի, Μαστούσιοςի հասցէին: Գրութիւնը տեղի ունեցած պիտի լինի մինչեւ 406 թիւը, հաւանօրէն, Թէոդորի քահանայութեան ատենով, ինչպէս յիշեցինք:

Հաւանական է, որ Մաշթոցի այցը ասորի եպիսկոպոսներին, որի մասին պատմում է Կորինւն, կապ ունի հաւատոյ խնդրի հետ եւ մօտ է 430 թուականներին: Աչքի է ընկնում մի հանգամանք: Եդեսիայից Մաշթոց իջնում է Սամոսատ, «յորում մեծապատիւ խից յեպիսկոպոսէն

եւ յեկեղեցոյն մեծարեալ լինէր»¹: Զարմանալի է, որ եպիսկոպոսի անունը չի տալիս, մինչդեռ յիշում է Ամիդի, Եդեսիայի եւ Մելիտինի եպիսկոպոսներին յանուանէ:

Սամոսատի գրչի անունը, որ է Հուսիանոս, նմանապէս արձանագրել է Կորինւն: Սամոսատի եպիսկոպոսական աթոռի վերայ նստած էր այն ժամանակ Անդրէաս: Սա խառն էր Եփեսոսեան աղմուկներին եւ գտնւում էր Յովհաննէս Անտիոքացու բանակում: Անշշանն ոմն չէր նստորականների շարքերում: Համարւում էր թշնամի Ռաբուլին, վերջինիս դասաւրբուցից յետոյ, եւ պատմում են, որ յանդիմանական նամակ է գրել Ռաբուլին նրա՝ Թէոդորիտի, կանոնաւոր Նեստորականի եւ Կիւրեղի քաջանուն ախոյեանի դէմ ելնելուն համար:

Արդեօք դաւանաբանական նկատումները չեն, որ ծածկել են Սամոսատի եպիսկոպոսի անունը: Ռաբուլ եւ Ակակ Կիւրեղեան հաւատի սիւներ էին, եւ որքան ցանկալի է սրանց ծանոթութիւնը, նոյնքան խորշիկ պիտի համարուէր Անդրէաս Սամոսացին, իբր նստորամիտ հերձուածող: Հնարաւոր է, ուրեմն, որ Անդրէասի անունը կամաւ է թողած:

Կորինւնը գրել է Մաշթոցի վարքը նրա մահից յետոյ որ դիպաւ Յաղկերտի ըստ Ղաղար Փարպեցու՝ երկրորդ տարին, մեհեկի 13, որ է 439 Մարտի 17 կամ 440 Մարտի 18: Գրել է Յովսէփի պատուէրով որ նահատակուեց նոյն Յաղկերտի 16 տարին, հրոտից 25, այն է 454, Յուլիս 25: Եւ որովհետեւ Կորինւնը չի յիշում Ե. Գարի շարժումներին, հաւանական է, որ մեռած է մինչեւ Արտաշատի ժողովը, Յաղկերտի երկոտասաներորդ տարին. 439—440: Սորանից հիմնում է, որ Մաշթոցի կեանքը գրած պիտի լինի 440—450 տասնամեակի ընթացքում:

Սակայն չի կարելի անուշադիր թողնել, որ Կորինւն Սիւնեաց Վասակ իշխանին գովելով, մեծարում է նրան այնպիսի մակդիրով, որ կասկածների դուռ է բաց անում: Սիսական վասակը ոչ միայն «խորհրդական եւ հանճարեղ» այլ եւ «յառաջիմաց շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ»: Արդեօք ակնարկ չէ հետագայ եղելութիւնների եւ Վասակի վարմունքի վրայ: Պէտք չէ՞ ենթադրել, որ Կորինւն համախոհ է եղել վատաբախտ մարգպանին եւ նրա կուսակցութեան եւ ուստի անհաղորդ է մնացել շարժման: Վասակին յառաջիմացութեան շնորհ վերագրելով հասկացնել է տալիս, որ ապստամբութեան ծանր հետեւանքները հեռատեսօրէն

կշռելով, հակառակ է հանդիսացել շարժման: Այս դեպքում Կորինթի նկատողութիւնը կը հնչի իրր խուլ զոզանջ արդարութեան ձայնի, այն ձայնին, որ այնպէս խեղդել են Մամիկոնեան պատմիչները, Եղիշէ եւ Ղազար:

Կորինթը գիտէ Վահան Ամատանուն հաղարպետի պաշտօնում, գիտէ եւ Նրա մահը. «յանկարծա հաս կենաց ամենեցուն լինէր»: Եղիշէն պատմում է, ի թիւս այն անցքերի, որ տեղի ունեցան Յազկերտի ԺԲ. տարին նաեւ հաղարպետի պաշտօնանկ լինելը. «հանեալ ի գործոյն փոխանակ նորա պարսկ ած յաշխարհն»: Եթէ փոխանակ նորա պարսկ ած յաշխարհն է, խօսքը նոյն Վահանի մասին է, նշանակում է, Նրա մահը պատահել է 439—440 թ. յետոյ շետեւարար եւ Կորինթի գործը ընկնում է նոյն թուից յետոյ: Այլեւ Կորինթը յիշում է հայրապետական աթոռի տեղապահներ, Սահակի եւ Մաշտոցի վախճանից յետոյ, Յովսէփին եւ «եւ այլ աշակերտ Յովհաննան, այր իսկ սուրբ վարդապետասէր եւ ճշմարտապատում»: Սա չափազանց շատ չարհարանքների է ենթարկում Տիգրան շատ չարհարանքների համար եւ արժանանում է քաղաքում հաւատի համար եւ արժանանում է խոստովանող կոչման. եւ յետոյ «ի նոյն վերահացութիւն դառնայր յերկիրն Հայոց»:

Ո՞վ է այս Յովհանն, որ անծանօթ է Եղիշէին եւ Ղազարին: Յայտնի է Արրահամ խոստովանողը, որ տասներկու տարւոյ գերուութիւնից յետոյ, ազատ արձակուեցաւ աքսորից: Չենք ուզում թէական մեկնութիւնների մէջ մտնել¹: Ով որ էլ լինի անծանօթ Յովհանն, Նրա դարձը չի կարելի յառաջ դնել քան Արրահամի եւ նախարարների արձակումը Պերսի հինգերորդ տարին այսինքն 462 թ. կան նշաններ, ուրեմն, որ Կորինթը թեւակոխել է Ե. դարի երկրորդ կեսը:

Ուրուլի մահից յետոյ Եղեսիայում զօրանում է նեստորականների ազդեցութիւնը: Նրա յաջորդ Իբասի օրով: Սորա մահը 457 թ. յառաջ է բերում զօրեղ ընդդիմութիւն եւ բուր Նեստորական վարդապետները հալածւում են Եղեսիայից Պարսից հողը: Վերջական հաւուածը դրւում է նրանց Եղեսիայի հոչակաւոր, պարսկական կոչուած դպրոցի, նեստորականութեան այդ դղեակի փակմամբ 489 թ.: Ուրբան թուլանում են յունական հոգեւորական նեստորի

կողմնակիցները, այժման զօրանում են նրանք պարսից իշխանութեան տակ, վայելելով մանաւանդ Պերոզ թագաւորի հովանաւորութիւնը (457—484):

Եռանդուն Բարձուկան կարողանում է ներշնչել Պերոզին այն միտքը, որ քրիստոնեաները երբեք սրտով չեն կպչի պարսից իշխանութեան եւ աչք չեն դարձնի կայսերներից, մինչեւ որ դաւանանքի խրամատը չանջրպետէ նրանց: Պէտք է, ուրեմն յառաջ տանել, խրախուսել նեստորականութիւնը այլադաւան քրիստոնեաներին բուն ոյժով պարտաւորել յարել նեստորական, իրը պետական եկեղեցու:

Պերոզը յաջորդը Վաղարշ 484—488, ինչպէս Կաւատ, սկզբներում (488—496). բարեկամ լինելով կայսերներին դադարեցրին հալածանքը ոչ նեստորական քրիստոնեաների: Սրանց համար նպաստաւոր պայմաններ ստեղծուեցան մանաւանդ Զնոն եւ Անաստաս հակաքաղկեդոնական կայսրների օրով:

Դժբախտաբար, Ե. դարի երկրորդ կեսի դաւանարանական ելեւէջների համապատասխան արձագանգն հայ եկեղեցական կեանքում թուում է թէ անհետ կորած է: Պետական իշխանութեան ճնշման տակ թերեւս նեստորականութիւնն եւս աջող օրեր ունեցած լինի: Բարգէն կաթողիկոսին ապաւինող ասորի եկեղեցականները հաւատացնում էին, որ նեստորականները լուրեր են տարածում, թէ հայերը նրանց հաւատակից են. «եւ այդպէս ասեն, թէ հոռոմք, եւ հայք եւ վիրք եւ աղուանք զնոյն կանոն եւ եւ զհաւատ ունին զոր մեքս ունիմք» (Գիրք թղթոց, էջ 46):

Այս խօսքերին, որ քարոզական նպատակով չափազանցած են, հարկաւ հաւատ չի կարելի ընծայել: Բայց եւ չի կարելի ժխտել, որ ճշմարտութեան նշոյլ կայ այն մտքով, որ մասնակի կղզիներ են եղել: Յիրաւի, ոչ միայն 424 թուի, այլ եւ 486 թուի նեստորական ժողովներին ներկայ եկեղեցականների թուում պատահում են ներկայացուցիչներ եւ Հայաստանից առաջնում՝ ոմն Արտաշահ Եպիսկոպոս, երկրորդում՝ Մովսէս Եպիսկոպոս (Synodicon orientale): Նեստորականների ներկայութիւնը, քարոզը, մրցումն ու նուաճումներն առաւել եւս պիտի լարէին տեղական ոյժերը նոցա ընդդիմութեանը եւ ամրակոչէին այն տրամադրութիւնը, որ անցել էր Եփեսոսեան մաքառումների հնոցով:

Կորինթը հաւատարիմ է այդ տրամադրութեան. Նրա գործը հակասորական կնիք, նես-

¹ Այս հարցի քննութեան համար յիշելու է, որ «Կաթողիկոսութիւն ներքողներ խաչին» անվանւոյ գրութեան համաձայն, Վարդանայ պատերազմից յետոյ հայրապետութիւնը բաժանում է երկուսի. «Յոհանն Մանգակունի ի պարսից կողման կաթողիկոս եւ Գիւտ ի կողման յունաց»:

տորական խորշանք ունի: Ասորական նպաստը գրեթե գիտում գիտամբ սքողուած է նրա գրչի տակ: Սուրբ գրքի թարգմանութիւնը համարում է յունական բնագրից թէ նախնականը եւ թէ սրբագրածը Եզնիկի բերած յոյն վաւեր օրինակի վերայ:

Ինչպէս եւ մեկնելու լինենք Կորինի դիրքը եւ յարակից խնդիրները, մի բան է հաստատուն, որ հայ եկեղեցու դաւանաբանութեան կիւրեղեան խարիսխը աւանդ է Եփեսոսի ժողովից: Մաշթոց եւ նրա աշակերտները Ղեւոնդ եւ թէաբար Կորին երեւան գալով ընդհանուր եկեղեցական ասպարիզում անմիջական մասնակցութիւն են ունեցել ճշմարտութեան որոնումներին եւ հիմնարկել են հայ դաւանաբանական շէնքը: Սերունդների միշտ արթուն զգացումը, միանգամ ստացած ժառանգութիւնը պահելու անգրգուռ կորովը բացատրելու է եւ նորանով, որ նա սրբագործուած է եղել հայ լուսաւորութեան ամօնների սրբազան աջով:

Պարիս, 20 Մարտ 1925:

ՊՐՈՓ. Ն. ԱՌՄՅ

(Վերջ:)



ՅՈՒՆԱՐԱՆ ԿՊՐՈՑԸ

ԵՒ

ՆՐԱ ԶԱՐԿԱՅՄԱՆ ԹՐԶԱՆՆԵՐԸ

Ն Ե Ր Ա Ճ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Շարունակութիւն:)

§ 10. Էջմիածնի Ժողովարանի Բէ- 1939 յեափրոմ գործած Ստորագրութեանց Նոր մեկնութիւնները: — Վերոյիշեալ աշխատութիւնս հրատարակելուց յետոյ, Էջմիածնի մատենադարանի հնագոյն ձեռագիրներն ուսումնասիրելիս՝ անսպասելի կերպով գտնուեց Արիստոտելի Ստորագրութեանց մի նոր մեկնութիւն, որն անձանթ ու կարեւոր մի երկ էր յունաբան հնագոյն գպրոցի:

Այդ մեկնութիւնը պահպանուել է Էջմիածնի թիւ 1939 ձեռագրում (= Կարին, Յուլի, Թ. 1897): Նոյն ձեռագիրը պարունակում է նաեւ հետաքրքիր մի հատուած Արիս-

տոտելի Ստորագրութեանց մի այլ մեկնութեան, որը համառօտ մի մնացորդ է ինչ որ անյայտ հին թարգմանութեան:

Նորագիւտ այդ մեկնութիւնների քննութիւննից երեւաց, որ ընդարձակ մեկնութիւնը թարգմանութիւն է Ստորագրութեանց մեկնութեան յունարէն այն բնագրի, որը հրատարակել էր գերմանացի գիտնական Ադոլֆ Բուսէն, իրրեւ Էլիաս իմաստասիրի աշխատութիւն¹: Համառօտ հատուածի յունարէն բնագիրը, որքան ինձ յայտնի է, չկայ Արիստոտելի Ստորագրութեանց տպագիր մեկնութիւնների մէջ, որ հրատարակել է Բերլինի կայսերական ակադեմիան:

Հայերէն բնագիրը թէ այդ հատուածի եւ թէ Էլիասին վերագրուած Ստորագրութեանց մեկնութեան լոյս է տեսել, ինչպէս վերեւ յիշուեց, 1911 թուին Պետրոգրադում գիտութեանց կայսերական ակադեմիայի հրատարակութեամբ²:

Էլիասին վերագրուած այդ մեկնութեան հայերէն թարգմանութեան բնագիրը սկզբից եւ վերջից թերի է, ուստի եւ նրա հայերէն վերնագիրը մնում է անորոշ: Հայերէն հրատարակութեան մէջ վերնագիրը դրուած է յունարէն տպագրի վերնագրի համաձայն, որը սակայն, ինչպէս կը տեսնենք, ոչ թէ յունարէն ձեռագիրներից է բղխում, այլ ենթադրական մի վերնագիր է, հիմնուած հրատարակչի, Ադոլֆ Բուսէի, բանասիրական հետախուզումների վրայ:

Հայերէն հրատարակութեան առաջաբանում ես արդէն մասնանշ էի արել, որ Ա. Բուսէի ենթադրութիւնը Ստորագրութեանց մեկնութեան հեղինակի մասին չէ համաձայնում հայ մատենագրութեան մէջ պահպանուած վկայութիւնների հետ, որ, իմ կարծիքով, վերաբերում են հենց նոյն այս մեկնութեան³. Մատենագրական այդ վկայութիւններից եւ Ստորագրութեանց մեկնութեան հայերէն բնագրի քննութիւնից երեւում է, որ Ա. Բուսէի եզրակացութիւնները դժուար է ընդունել, իրրեւ վերջնական ու անփոփոխ: Այդ եզրակացութիւնները, որ հաւանական են համարուած Բիւզանդական մատենագրութեան, ինչպէս եւ փիլիսոփայութեան պատմութեան մէջ, կարօտ են, իմ կարծիքով, վերաքննութեան հայկական տուեալների

¹ Տե՛ս A. Busse, Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria, Berolini 1900, էջ 108-200:

² Մեկնութիւն Ստորագրութեանց Արիստոտելի ընդհայեալ Էլիասի իմաստասիրի, էջ 1-140 եւ Հատուած ինչ մեկնութեան Ստորագրութեանց Արիստոտելի, էջ 141-149:

³ Տե՛ս Մեկնութիւն Ստորագրութեանց, էջ II եւ III: